## «ԼՈՒՍԱՑՈՒՅՑ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՉՈՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի N 843-Ն որոշման, Աբովյան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 25-ի N 68-Ն որոշման, հիմք ընդունելով «Լուսացույց» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության լիազորած անձ Անուշ Մխիթարյանի հայտը (մուտք՝ 2021 թվականի դեկտեմբերի 13-ի N S-709).

1. «Լուսացույց» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տալ 2021 թվականի չորրորդ եռամսյակի ընթացքում Աբովյան քաղաքի Հանրապետության փողոցի թիվ 22 հասցեում գտնվող 93.44 քառակուսի մետր մակերեսով խանութում ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվություն (Թույլտվություն N 169 կցվում է):

2. «Լուսացույց» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը պարտավոր է Աբովյանի համայնքապետարանի 900105201074 հաշվեհամարին վճարել տեղական տուրք՝ 13 500 (տասներեք հազար հինգ հարյուր) դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Լուսացույց» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2021թ. դեկտեմբերի 15
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱԲՈՎՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

---

# ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ N ՈԱԽԾ - 169

## ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ

Տրված՝ ***15 դեկտեմբերի 2021թ.***
Վաճառքի կամ իրացման թույլատրված ապրանքի անվանումը՝
***Ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվություն:***

Հայտատու իրավաբանական անձի լրիվ անվանումը, կազմակերպաիրավական ձևը և գտնվելու վայրը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը և գտնվելու վայրը, հարկ վճարողի հաշվառման համարը՝
***«ԼՈՒՍԱՑՈՒՅՑ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, ՀՀ Կոտայքի մարզ ք. Աբովյան, Հանրապետության պողոտա 2 շ., ՀՎՀՀ՝ 03550055:***

Գործունեության տեսակի իրականացման վայրը՝ ***ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան Հանրապետության փողոց թիվ 22 խանութ:***

Շինության տեսակը՝ ***հիմնական շինություն:***

Թույլտվության գործողության ժամկետը՝ ***01 հոկտեմբերի 2021թ.***-ից մինչև ***31 դեկտեմբերի 2021թ.***-ը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 դեկտեմբերի 2021 թվականի N 1636

## ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՌՈՒԴԻԿ ԱՂԱՋԱՆՅԱՆԻՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՉՈՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՄԱՆԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի N 843-Ն որոշման, Աբովյան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 25-ի N 68-Ն որոշման, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Ռուդիկ Աղաջանյանի հայտը (մուտք՝ 2021 թվականի դեկտեմբերի 13-ի N Ք-3710).

1. Անհատ ձեռնարկատեր Ռուդիկ Աղաջանյանին տալ 2021 թվականի չորրորդ եռամսյակի ընթացքում Աբովյան քաղաքի 4-րդ միկրոշրջանի թիվ 30/1 հասցեում գտնվող 31.11 քառակուսի մետր մակերեսով սպասարկման օբյեկտում ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նշանակության ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների) կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվություն (Թույլտվություն N 168 կցվում է):

2. Անհատ ձեռնարկատեր Ռուդիկ Աղաջանյանը պարտավոր է Աբովյանի համայնքապետարանի 900105201074 հաշվեհամարին վճարել տեղական տուրք՝ 21 000 (քսանմեկ հազար) դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Ռուդիկ Աղաջանյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2021թ. դեկտեմբերի 15
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱԲՈՎՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

---

## ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ N ՈԱԽԾ - 168

## *ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՄԱՆԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ*

Տրված՝ ***15 դեկտեմբերի 2021թ.***

Վաճառքի կամ իրացման թույլատրված ապրանքի անվանումը՝
***Ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նշանակության ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների) կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք:***

Հայտատու իրավաբանական անձի լրիվ անվանումը, կազմակերպաիրավական ձևը և գտնվելու վայրը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը և գտնվելու վայրը, հարկ վճարողի հաշվառման համարը՝
***Ռուդիկ Աղաջանյան, անհատ ձեռնարկատեր, ՀՀ Կոտայքի մարզ ք. Աբովյան 4-րդ մ/շ 61 շ. 32 բն., ՀՎՀՀ՝ 43068243:***

Գործունեության տեսակի իրականացման վայրը՝ ***ՀՀ Կոտայքի մարզ ք. Աբովյան 4-րդ մ/շ թիվ 30/1, սպասարկման օբյեկտ:***

Շինության տեսակը՝ ***հիմնական շինություն:***

Թույլտվության գործողության ժամկետը՝ ***01 հոկտեմբերի 2021թ.***-ից մինչև ***31 դեկտեմբերի 2021թ.***-ը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 դեկտեմբերի 2021 թվականի N 1635

## ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ Է. ԱՎԱԳՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 20 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԿԻՍԱԿԱՌՈՒՅՑ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՊԱՐԻՍՊԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի և 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն, 2006 թվականի մայիսի 26-ի N 1022-Ն, 2007 թվականի օգոստոսի 9-ի N 1036-Ն և 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Ն որոշումների, Աբովյան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 25-ի N 70-Ն և 2021 թվականի հունվարի 26-ի N 06-Ա որոշումների, հաշվի առնելով Ջավեն Հակոբյանի համաձայնությունը.

1. Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2021 թվականի դեկտեմբերի 10-ի N 10122021-07-0144 վկայական) Է. Ավագյան փողոցի թիվ 20 հասցեում գտնվող կիսակառույց շինությունները՝ 90.1 քառակուսի մետր արտաքին մակերեսով, 73.2 քառակուսի մետր ներքին մակերեսով, պարիսպը՝ 3.2 քառակուսի մետր մակերեսով և դրանց պահպանման ու սպասարկման համար առանձնացված 120.9 քառակուսի մետր մակերեսով հասարակական կառուցապատման հողամասը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով օտարել կառույցներն իրականացրած Ջավեն Հակոբյանին:

2. Ընդունել ի գիտություն, որ՝

1) շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

2) շինությունները, համաձայն համայնքի գլխավոր հատակագծի և համայնքին փոխանցված հողերի ցանկի, կառուցված չեն Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում.

3) շինությունները կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Ուղղակի վաճառքի գները սահմանված են հետևյալ հաշվարկով.

1) շինությունների 1 քառակուսի մետրի համար՝ 24 525 (քսանչորս հազար հինգ հարյուր քսանհինգ) դրամ (տարածագնահատման 9-րդ գոտի, կիրառված գործակիցը՝ 0.2725).

2) առանձնացված հողամասի 1 քառակուսի մետրի կադաստրային արժեքը՝ 10 513.8 (տասը հազար հինգ հարյուր տասներեք ամբողջ ութ) դրամ:

4. Ջավեն Հակոբյանը պարտավոր է վճարել.

1) համայնքապետարանի 900105201777 հաշվեհամարին՝ 2 288 180 (երկու միլիոն երկու հարյուր ութսունութ հազար հարյուր ութսուն) դրամ՝ շինությունների գինը.

2) համայնքապետարանի 900105201363 հաշվեհամարին՝ 1 271 120 (մեկ միլիոն երկու հարյուր յոթանասունմեկ հազար հարյուր քսան) դրամ՝ հողամասի գինը.

3) համայնքապետարանի 900105201652 հաշվեհամարին՝ 65 000 (վաթսունհինգ հազար) դրամ՝ համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքի օտարման փաստաթղթերի կազմման համար ծառայության վճար, 5 000 (հինգ հազար) դրամ՝ հասցեի տրամադրման ծառայության վճար:

5. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Զավեն Հակոբյանի կողմից:

6. Սույն որոշման ուժի մեջ մտնելու օրվանից 60-օրյա ժամկետում որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպում չկատարելու դեպքում որոշումը կհամարվի ուժը կորցրած:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Զավեն Հակոբյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2021թ. դեկտեմբերի 15

ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 դեկտեմբերի 2021 թվականի N 1634

## ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 17-ի N 864 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, հաշվի առնելով Պավլի Ղույանի դիմումը (մուտք՝ 2021 թվականի հոկտեմբերի 04-ի N Ք-3158).

1. Աբովյան համայնքի ղեկավարի 2020 թվականի սեպտեմբերի 17-ի «Պավլի Ղույանին և Կարինե Ղույանին շինարարության թույլտվություն տալու մասին» N 864 որոշմամբ տրված N 86 շինարարության թույլտվության 4-րդ կետում կատարել հետևյալ լրացումները՝ «նախատեսված դեպքերում)» բառերից հետո լրացնել ««ՍԵԳԱՍ» ՍՊԸ» բառերով, իսկ «իրավասու մարմնի» բառերից հետո՝ «ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Պավլի Ղույանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2021թ. դեկտեմբերի 14
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 դեկտեմբերի 2021 թվականի N 1633

## ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 17-Ի N 737 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, հաշվի առնելով Բորիս Բաղմանյանի լիազորած անձ Անդրանիկ Բաղմանյանի դիմումը (մուտք՝ 2021 թվականի հոկտեմբերի 21-ի N Ք-3295).

1. Աբովյան համայնքի ղեկավարի 2021 թվականի հունիսի 17-ի «Բորիս Բաղմանյանին շինարարության թույլտվություն տալու մասին» N 737 որոշմամբ տրված N 59 շինարարության թույլտվության 4-րդ կետում կատարել հետևյալ լրացումները՝ «նախատեսված դեպքերում)» բառերից հետո լրացնել ««ՀԱԲՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ» բառերով, իսկ «իրավասու մարմնի» բառերից հետո՝ «ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2021թ. դեկտեմբերի 14
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 դեկտեմբերի 2021 թվականի N 1632

## ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 22-Ի N 381 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, հաշվի առնելով Հովհաննես Արզումանյանի դիմումը (մուտք՝ 2021 թվականի հոկտեմբերի 14-ի NՔ-3235).

1. Աբովյան համայնքի ղեկավարի 2020 թվականի մայիսի 22-ի «Հովհաննես Արզումանյանին և Անուշ Ավետիսյանին շինարարության թույլտվություն տալու մասին» N 381 որոշմամբ տրված N 24 շինարարության թույլտվության 4-րդ կետում կատարել հետևյալ լրացումները՝ «նախատեսված դեպքերում)» բառերից հետո լրացնել ««ՀԱԲՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ» բառերով, իսկ «իրավասու մարմնի» բառերից հետո՝ «ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հովհաննես Արզումանյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2021թ. դեկտեմբերի 14
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 դեկտեմբերի 2021 թվականի N 1631

## ԱԲՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԵՎԱՆԻ ՓՈՂՈՑԻ 2/1 ՇԵՆՔԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԱՎՏՈՏՆԱԿԻՆ ԵՎ ԴՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 50-րդ, 51-րդ և 55-րդ կետերի, Աբովյան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 25-ի N 70-Ն որոշման և հաշվի առնելով Անահիտ Վարդանյանի դիմումը (մուտք՝ 2021 թվականի դեկտեմբերի 03-ի N Ք-3669).

1. Աբովյան քաղաքի Սևանի փողոցի 2/1 շենքին հարակից ավտոտնակին և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասին (հիմք՝ 2015 թվականի հունվարի 14-ի սեփականության իրավունքի և ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրեր՝ գրանցված Կոտայքի մարզի նոտարական տարածքի նոտարի սեղանամատյանում համապատասխանաբար՝ N 55 և N 56) տրամադրել հասցե՝ քաղաք Աբովյան, 2-րդ միկրոշրջան, 2/160 ավտոտնակ:
2. Անահիտ Վարդանյանը պարտավոր է Աբովյանի համայնքապետարանի 900105201652 հաշվեհամարին մուծել 5 000 (հինգ հազար) դրամ՝ հասցեի տրամադրման ծառայության վճար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Անահիտ Վարդանյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2021թ. դեկտեմբերի 14
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 դեկտեմբերի 2021 թվականի N 1630

## ՍԱՄՎԵԼ ԵՎ ՔՆԱՐԻԿ ՀԱԿՈԲՅԱՆՆԵՐԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԲԱԺԱՆՎԱԾ ՄԱՍԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 45-րդ, 50-րդ, 51-րդ և 55-րդ կետերի, Աբովյան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 25-ի N 70-Ն որոշման և հաշվի առնելով Սամվել Հակոբյանի դիմումը (մուտք՝ 2021 թվականի նոյեմբերի 25-ի N Ք-3576).

1. Սամվել և Քնարիկ Հակոբյաններին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2021 թվականի նոյեմբերի 22-ի N 22112021-07-0138 վկայական) Աբովյան քաղաքի Տարտուի փողոցի 2 շենքի թիվ 2 հասցեում գտնվող բնակարանի 2 մասի բաժանված մասերին՝ «ԳԻՍ-ԱՐՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2021 թվականի նոյեմբերի 23-ին կազմված շինությունների բաժանման սխեմայի (կցվում է) համաձայն՝ տրամադրել հասցեներ՝ 1-ին առանձնացվող շինությանը (57.03 քառակուսի մետր ներքին մակերեսով)՝ քաղաք Աբովյան, Տարտուի փողոց, 2 շենք, 2 բնակարան, 2-րդ առանձնացվող շինությանը (17.3 քառակուսի մետր ներքին մակերեսով)՝ քաղաք Աբովյան, Տարտուի փողոց, 2 շենք, 2/1 բնակարան:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված անձինք պարտավոր են Աբովյանի համայնքապետարանի 900105201652 հաշվեհամարին մուծել 10 000 (տասը հազար) դրամ՝ հասցեների տրամադրման ծառայության վճար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2021թ. դեկտեմբերի 14
ք. Աբովյան

# ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՄԱՆ ՍԽԵՄԱ

Կոտայքի մարզ ք. Աբովյան Տարտուի փողոց 2-րդ շենք, թիվ 2 բն.

մարզ,համայնք,հասցե

| | |
|---|---|
| Սեփականատեր | Սամվել և Քնարիկ Հակոբյաններ |




*Լրացուցիչ նշումներ.*

| Մասշտաբ 1:100 | | |
|---|---|---|
| Որակավորում ունեցող անձ | | Վահե Վարդանյան |
| Որակավորման վկայականի համարը | | 0339 |
| Ստորագրություն | | |
| Իրավաբանական անձի անվանումը | | «ԳԻՍ-ԱՐՏ» ՍՊԸ |
| ՀՎՀՀ | | 03532649 |
| Ստորագրություն | | |
| ամիս ամսաթիվ | չափագրության | 22.11.2021 |
| | հատակագծի կազմման | 23.11.2021 |

# ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Կոտայքի մարզ ք. Աբովյան Տարտուի փողոց 2-րդ շենք, թիվ

մարզ,համայնք,հասցե

| Սեփականատեր | Սամվել և Քնարիկ Հակոբյաններ |
|---|---|

5.Iհարկ
h=2.65-2.75
d=0.10-0.55




Լրացուցիչ նշումներ.

| Մասշտաբ 1:100 | | |
|---|---|---|
| Որակավորում ունեցող անձ | | Վահե Վարդանյան |
| Որակավորման վկայականի համարը | | 0339 |
| Ստորագրություն | | |
| Իրավաբանական անձի անվանումը | | «ԳԻՍ-ԱՐՏ» ՍՊԸ |
| ՀՎՀՀ | | 03532649 |
| Ստորագրություն | | |
| ամիս ամսաթիվ | չափագրության | 22.11.2021 |
| | հատակագծի կազմման | 23.11.2021 |

# Շինությունների բնութագիր ք Աբովյան Տարտուի փող. S1

| << | Նպատակային նշանակությունը | Գործառական նշանակությունը | Հարկ | Հարկայնությունը | Մակերես (մ²) | | Բարձրությունը (մ) | Ծավալը (մ³) | Կառուցման տարեթիվը | Տանիքի նյութը | | | | Ավարտվածության աստիճանը | | | | Պատերի շինանյութի անվանումը | Միջհարկային ծածկի նյութը | | Արտաքին հարդարումը ըստ կողմերի | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Օրինական | Ինքնակամ | | | | թիթեղ | շիֆեր | կղմինդր | այլ նյութ | անավարտ | մինչև 50% | 50-80% | 80% և ավելի | | փայտ | երկաթբետոն | Հասարակ | ֆակտուրային | ֆոնային | սալիկապատ | կախովի ապակե վահանակներ |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 | 24 | 25 | 26 |
| 1 | բնակելի | բնակարան | 1 | 5 | 46.58 | | 2.65 | 123.44 | 1966 | | | | | | | | v | տուֆ | | v | | | | | |
| 1 | բնակելի | բնակարանN5 | 1 | 5 | 10.45 | | 2.75 | 28.74 | 1966 | | | | | | | | v | տուֆ | | v | | | | | |

| Շինությունների ընդհանուր մակերեսը (քմ) | Այդ թվում | |
|---|---|---|
| | Օրինական կառուցված (քմ) | Ինքնակամ կառուցված (քմ) |
| 27 | 28 | 29 |
| 57.03 | 57.03 | 0.00 |

Կատարող ______ (ստորագրություն) Վ.Վարդանյան (ստորագրություն) 23.11.2020թ. (ամիս,ամսաթիվ)

Որակավորման վկայականի 339 (համարը) 14.05.2014թ. (տրման ամիս,ամսաթիվ)

Իրավաբանական անձի 03Ա 081920 (պետական գրանցման համար) <<ԳԻՍ-ԱՐՏ>>ՍՊԸ (անվանում) ______ (ստորագրություն)

«ԳԻՍ-ԱՐՏ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ «ГИС-АРТ» «GIS-ART» 03532649 KOTAYK Limited Liability Comp.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 դեկտեմբերի 2021 թվականի N 1629

## ԺԱՆՆԱ ԱԶԱՐՅԱՆԻՆ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, Աբովյան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 25-ի N 68-Ն որոշման, հաշվի առնելով Ժաննա Ազարյանի դիմումը (մուտք՝ 2021 թվականի հոկտեմբերի 13-ի N Ք-3226).

1. Համաձայնություն տալ «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության կողմից 2020 թվականի սեպտեմբերի 01-ին տրված N ՎՋ-2924/2020 տեխնիկական պայմանի ուղեգծով հետագիծ-նախագծային փաստաթղթերին և Ժաննա Ազարյանին տրամադրել ջրամատակարարման համակարգի կառուցման շինարարության թույլտվություն (շինարարության թույլտվությունը կցվում է):

2. Ժաննա Ազարյանը պարտավոր է Աբովյանի համայնքապետարանի 900105201454 հաշվեհամարին մուծել 45 000 (քառասունհինգ հազար) դրամ տեղական տուրք՝ շինարարության թույլտվության համար:

3. Շինարարական աշխատանքները կատարելիս անհրաժեշտ է տեղեկացնել «Աբովյանի համայնքային կոմունալ տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը, Հայաստանի Հանրապետության ոստիկանության Կոտայքի ճանապարհային ոստիկանությանը և մյուս շահագրգիռ կազմակերպություններին:

4. Քանդված ասֆալտի հատվածները վերականգնել տասնօրյա ժամկետում:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ժաննա Ազարյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2021թ. դեկտեմբերի 14
ք. Աբովյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ Ν Ջ- 46

**«14» դեկտեմբերի 2021 թ.**

Տրված է կառուցապատող __ԺԱՆՆԱ ԱԶԱՐՅԱՆ__ -ին՝

__Անշարժ գույքի իրավունքի պետական գրանցման № 1730052 վկայական, ՀՀ, Կոտայքի մարզ , ք. Աբովյան, 7-րդ միկրոշրջանի 3-րդ թաղամասի թիվ 32__

__ջրամատակարարման համակարգի__ օբյեկտի

__կառուցման__ արդիականացման աշխատանքների կատարման համար:

1. Գծային ինժեներական ենթակառուցվածքների ստեղծման (արդիականացման) հետագիծ-նախագծային փաստաթղթերը մշակվել են __«ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ»__

__«ՀԱԲՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ» ՍՊԸ, լիցենզիա ՔՊԼ 16931__ կողմից:

2. Շինարարական աշխատանքներն իրականացնել __10 օրվա__ ընթացքում:

3. Հատուկ պայմաններ՝

1) կառուցապատողը, նախքան շինարարությունն սկսելը, ինչպես նաև դրա ընթացքում, պարտավոր է հասցվելիք վնասների փոխհատուցման համար համաձայնության գալ կառուցապատման հետևանքով վնասներ կրող սուբյեկտների հետ.

2) շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետներում կառուցապատումը չավարտելու դեպքում գործում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման N 1 հավելվածի 123-126-րդ կետերով սահմանված պահանջները:

4. Թույլտվության հիման վրա ցանկացած շինարարական և զուգահեռ աշխատանք կարող է իրականացվել բացառապես Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, նախագծային փաստաթղթերին և նորմատիվ-տեխնիկական պահանջներին համապատասխան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Կ.Տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 դեկտեմբերի 2021 թվականի N 1628

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԱԲՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ ՀԱՏԻՍԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 1/25 ՀԱՍՑԵՈՒՄ ԷԼԵԿՏՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, Աբովյան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 25-ի N 68-Ն որոշման, հաշվի առնելով «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության գրությունը (մուտք՝ 2021 թվականի նոյեմբերի 19-ի N Տ-663).

1.Համաձայնություն տալ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը Աբովյան քաղաքի Հատիսի փողոցի թիվ 1/25 հասցեում գտնվող Սեդա Նաղդալյանին պատկանող տարածքի 0,4 ԿՎ հզորությամբ էլեկտրամատակարարման մալուխային գիծը նախագծել «ՎՈԼԻՈՍ նախագծային ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության կողմից տրված 6311-ԷՄ տեխնիկական պայմանի ուղեգծով և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրել էլեկտրամատակարարման շինարարության թույլտվություն (շինարարության թույլտվությունը կցվում է):

2.«Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը պարտավոր է Աբովյանի համայնքապետարանի 900105201454 հաշվեհամարին մուծել 45 000 (քառասունհինգ հազար) դրամ տեղական տուրք՝ շինարարության թույլտվության համար:

3.Շինարարական աշխատանքները կատարելիս անհրաժեշտ է տեղեկացնել «Աբովյանի համայնքային կոմունալ տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը, Հայաստանի Հանրապետության ոստիկանության Կոտայքի ճանապարհային ոստիկանությանը և մյուս շահագրգիռ կազմակերպություններին:

4. Քանդված տարածքի հատվածները վերականգնել տասնհինգօրյա ժամկետում:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2021թ. դեկտեմբերի 14
ք. Աբովյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**

**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ**

**ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ N ԷԼ-42**

**«14» դեկտեմբերի 2021թ.**

Տրված է կառուցապատող **«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԲԸ**-ին՝

**ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Հատիսի փողոց, թիվ 1/25 հասցեում**

(փողոցի համարը, գտնվելու վայրը, հողամասի գտնվելու վայրը)

**էլեկտրամատակարարման** օբյեկտի

(օբյեկտի անվանումը, հակիրճ բնութագիրը, հիմնական ցուցանիշները)

**կառուցման** արդիականացման աշխատանքների կատարման համար:

1. Գծային ինժեներական ենթակառուցվածքների ստեղծման (արդիականացման) հետագիծ-նախագծային փաստաթղթերը մշակվել են **«Աշխատանքային նախագիծ»**

(նախագծային փաստաթղթերի մաս)

**«ՎՈԼԻՌՍ նախագծային ինստիտուտ» ՓԲԸ** կողմից:

(նախագծային աշխատանքների կատարողի անվանումը, լիցենզիայի համարը)

2. Շինարարական աշխատանքներն իրականացնել **1 տարվա** ընթացքում:

(նշել շինարարության նորմատիվային տևողությունը)

3. Հատուկ պայմաններ՝

1) կառուցապատողը, նախքան շինարարությունն սկսելը, ինչպես նաև դրա ընթացքում, պարտավոր է հասցվելիք վնասների փոխհատուցման համար համաձայնության գալ կառուցապատման հետևանքով վնասներ կրող սուբյեկտների հետ.

2) շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետներում կառուցապատումը չավարտելու դեպքում գործում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման N 1 հավելվածի 123-126-րդ կետերով սահմանված պահանջները:

4. Թույլտվության հիման վրա ցանկացած շինարարական և զուգահեռ աշխատանք կարող է իրականացվել բացառապես Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, նախագծային փաստաթղթերին և նորմատիվ-տեխնիկական պահանջներին համապատասխան:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ  ՂԵԿԱՎԱՐ** **ՎԱՀԱԳՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

Կ. Տ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

# Ո Ր Ո Շ Ու Մ

14 դեկտեմբերի 2021 թվականի N 1627

## ՇՈՒՇԻԿ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՁԵՎԱՓՈԽՈՒՄՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 27-րդ, 30-րդ, 31-րդ կետերի և 32-րդ կետի «բ» ենթակետի, հաշվի առնելով «ՀԱՐՇԻՆ ՆԱԽԱԳԻԾ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2021 թվականի հոկտեմբերի 18-ի տեխնիկական եզրակացությունը և այն հանգամանքը, որ ինքնակամ ձևափոխումն իրականացված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, դրա պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, դռան ինքնակամ ձևափոխումն իրականացված է շենքի արտաքին պատերի հաշվին, փոխվել են կրող կոնստրուկցիաները ու չի փոփոխվել սեփականատերերի բաժնային սեփականությունը, հիմք ընդունելով Շուշիկ Բաղդասարյանի դիմումը (մուտք՝ 2021 թվականի հոկտեմբերի 25-ի N Ք-3328).

1. Շուշիկ Հատեի Բաղդասարյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2000 թվականի հունիսի 27-ի N 0092843 վկայական, Աբովյան համայնքի ղեկավարի 2021 թվականի նոյեմբերի 04-ի N 1387 որոշում) Աբովյան քաղաքի Օգոստոսի 23-ի փողոցի 12 շենքի թիվ 119/2 բնակարանում՝ «ՏԻԳՐԱՆ ՓՈԹԻԿՅԱՆ» անհատ ձեռնարկատիրոջ կողմից 2021 թվականի դեկտեմբերի 09-ին կազմված շինությունների հատակագծի (կցվում է) համաձայն՝ ինքնակամ բացված 1 դուռը համարել օրինական:

2. Շուշիկ Բաղդասարյանը պարտավոր է ինքնակամ իրականացված ձևափոխման օրինականացման համար սույն որոշման ընդունման օրվանից 60 (վաթսուն) օրվա ընթացքում Աբովյանի համայնքապետարանի 900105201397 հաշվեհամարին մուծել 3 206 (երեք հազար երկու հարյուր վեց) դրամ՝ հակառակ դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2021թ. դեկտեմբերի 14
ք. Աբովյան

# ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

| Կոտայք | Աբովյան<br>Մարզ, համայնք, հասցե | Հանրակացարան 2-րդ շենք թիվ 119 բնակարան |
|---|---|---|
| Սեփականատեր | Շուշիկ Բաղդասարյան | |




*Լրացուցիչ նշումներ.*

առկա է ինքնակամ բացված 1 դուռ, որը կատարվել է շենքի արտաքին պատի հաշվին

| Մասշտաբ 1:100 | | |
|---|---|---|
| Որակավորում ունեցող անձ | | Տ. ՓՈԹԻԿՅԱՆ |
| Որակավորման վկայականի համարը | | N 0181 |
| Ստորագրություն | | |
| Իրավաբանական անձի անվանումը | | ԱՁ Տիգրան Փոթիկյան |
| ՀՎՀՀ | | 01U902770 |
| Ստորագրություն | | |
| ամիս ամսաթիվ | չափագրության | 15 10 2021 |
| | հատակագծի կազմման | 08 12 2021 |
| | | Կ.Տ. |

# Շինությունների բնութագիր

| ՀՀ | Նպատակային նշանակություն | Գործառնական նշանակություն | Հարկ | Հարկայնություն | Մակերեսները (քմ) | | Բարձրությունը (մ) | Ծավալը (խմ) | Կառուցման տարեթիվը | Տանիքի նյութը | | | | Ավարտվածության աստիճանը | | | | Պատերի շինանյութի տեսակը | Միջհարկային ծածկի նյութը | | Արտաքին հարդարումն ըստ կողմերի | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | Օրինական | Ինքնակամ | | | | թիթեղ | շիֆեր | կղմինդր | այլ նյութ | անավարտ | մինչև 50% | 50-80% | 80% և ավել | | փայտ | երկաթբետոն | սրբատաշ | երեսապատված | սվաղած | ապակեպատ | առանց արտաքին հարդարման |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 | 13 | 14 | 15 | 16 | 17 | 18 | 19 | 20 | 21 | 22 | 23 | 24 | 25 | 26 |
| 1 | Բնակ. | բնակարան | 1 | 4 | 14.16 | - | 2.50 | 35.40 | կ/գ | - | - | - | - | - | - | - | v | քար | - | v | - | 1 | - | - | 3 |
| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |

Բացված է ինքնակամ 1 դուռ

Շինության տարեթվերը գրվել է ըստ սեփականատիրոջ բանավոր խոսքի հիման վրա

| Շինության ընդհանուր մակերեսը (քմ) | Այդ թվում Օրինական կառուցված | Այդ թվում Ինքնակամ կառուցված |
|---|---|---|
| 27 | 28 | 29 |
| 14.16 | 14.16 | - |

Կատարող ____________ (ստորագրություն) Տ. ՓՈԹԻԿՅԱՆ (անուն, ազգանուն) 09/ 2 2021 (ամիս, ամսաթիվ)

Որակավորման վկայականի N 0181 (համարը) «05» Դեկտեմբեր 2011թ. (տրման ամիս, ամսաթիվ)

Իրավաբանական անձի 01Ա902770 (պետական գրանցման համարը) ԱՁ Տիգրան Փոթիկյան (անվանումը) ____________ (ստորագրություն)

ԱՁ ՏԻԳՐԱՆ ՓՈԹԻԿՅԱՆ PRIV. ENTREPR. TIGRAN POTIKYAN YEREVAN 374580 № 01Ա902770

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 դեկտեմբերի 2021 թվականի N 1626

## ՄԱՐԻՆԵ ԴԱՎԹՅԱՆԻ ՀԵՏ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Աբովյան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 25-ի N 73-Ն և 2021 թվականի հունվարի 26-ի N 06-Ա որոշումների, հիմք ընդունելով Մարինե Դավթյանի դիմումը (մուտք՝ 2021 թվականի մայիսի 07-ի N Ք-1085).

1. Մարինե Դավթյանի հետ կնքել իրեն սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2013 թվականի սեպտեմբերի 6-ի N 06092013-07-0040 վկայական) Աբովյան քաղաքի 2-րդ միկրոշրջանի թիվ 2/867 հասցեում գտնվող ավտոտնակի պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասի վարձակալության պայմանագիր մինչև 2030 թվականի դեկտեմբերի 31-ը ժամկետով, տարեկան 13 600 (տասներեք հազար վեց հարյուր) դրամ վարձավճարով:

2. Սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Մարինե Դավթյանի կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Մարինե Դավթյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2021թ. դեկտեմբերի 14
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 դեկտեմբերի 2021 թվականի   N 1625

## «ԱՆԱՀԻՏ ՄԱՆԱՍՅԱՆ ՀՐԱՉԻԿԻ» ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՉՈՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՄԱՆԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի N 843-Ն որոշման, Աբովյան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 25-ի N 68-Ն որոշման, հիմք ընդունելով «Անահիտ Մանասյան Հրաչիկի» անհատ ձեռնարկատիրոջ հայտը (մուտք՝ 2021 թվականի դեկտեմբերի 10-ի N Ք-3704).

1. «Անահիտ Մանասյան Հրաչիկի» անհատ ձեռնարկատիրոջը տալ 2021 թվականի չորրորդ եռամսյակի ընթացքում Աբովյան քաղաքի Կոտայքի փողոցի թիվ 1/94 հասցեում (46.7 քառակուսի մետր) ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նշանակության ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների) կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվություն  (Թույլտվություն N 167 կցվում է):

2. «Անահիտ Մանասյան Հրաչիկի» անհատ ձեռնարկատերը պարտավոր է Աբովյանի համայնքապետարանի 900105201074 հաշվեհամարին վճարել տեղական տուրք՝ 21 000 (քսանմեկ հազար) դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Անահիտ Մանասյան Հրաչիկի» անհատ ձեռնարկատիրոջը որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ  Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2021թ. դեկտեմբերի 14
ք. Աբովյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱԲՈՎՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

---

# ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ N ՈԱԽԾ - 167

## *ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՄԱՆԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ*

Տրված՝ ***14 դեկտեմբերի 2021թ.***

Վաճառքի կամ իրացման թույլատրված ապրանքի անվանումը՝
***Ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նշանակության ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների) կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք:***

Հայտատու իրավաբանական անձի լրիվ անվանումը, կազմակերպաիրավական ձևը և գտնվելու վայրը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը և գտնվելու վայրը, հարկ վճարողի հաշվառման համարը՝
***«Անահիտ Մանասյան Հրաչիկի» անհատ ձեռնարկատեր, ՀՀ Կոտայքի մարզ գ. Մայակովսկի 5 փողոց 2 տուն, ՀՎՀՀ՝ 87522474:***

Գործունեության տեսակի իրականացման վայրը՝ ***ՀՀ Կոտայքի մարզ ք. Աբովյան Կոտայքի փողոց 1/94:***

Շինության տեսակը՝ ***հիմնական շինություն:***

Թույլտվության գործողության ժամկետը՝ ***01 հոկտեմբերի 2021թ.***-ից մինչև ***31 դեկտեմբերի 2021թ.***-ը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# Ո Ր Ո Շ Ու Մ

14 դեկտեմբերի 2021 թվականի N 1624

## ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 3-ՐԴ ՄԻԿՐՈՇՐՋԱՆԻ ԹԻՎ 3/7 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ԴՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի և 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն, 2006 թվականի մայիսի 26-ի N 1022-Ն, 2007 թվականի օգոստոսի 9-ի N 1036-Ն և 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Ն որոշումների, Աբովյան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 25-ի N 70-Ն և 2021 թվականի հունվարի 26-ի N 06-Ա որոշումների, հաշվի առնելով Արայիկ Մնացականյանի համաձայնությունը.

1. Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող (հիմք՝ 2021 թվականի դեկտեմբերի 6-ի N 06122021-07-0189 վկայական) 3-րդ միկրոշրջանի թիվ 3/7 հասցեում գտնվող ավտոտնակը՝ 18.5 քառակուսի մետր արտաքին մակերեսով, 17.3 քառակուսի մետր ներքին մակերեսով և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված 18.5 քառակուսի մետր մակերեսով բնակելի կառուցապատման հողամասը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով օտարել կառույցն իրականացրած Արայիկ Մնացականյանին:

2. Ընդունել ի գիտություն, որ՝

1) շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

2) շինությունը, համաձայն համայնքի գլխավոր հատակագծի և համայնքին փոխանցված հողերի ցանկի, կառուցված չէ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում.

3) շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Ուղղակի վաճառքի գները սահմանված են հետևյալ հաշվարկով.

1) ավտոտնակի 1 քառակուսի մետրի համար՝ 3 206 (երեք հազար երկու հարյուր վեց) դրամ (տարածագնահատման 8-րդ գոտի, կիրառված գործակիցը՝ 0.3206).

2) առանձնացված հողամասի 1 քառակուսի մետրի կադաստրային արժեքը՝ 16 176.6 (տասնվեց հազար հարյուր յոթանասունվեց ամբողջ վեց) դրամ:

4. Արայիկ Մնացականյանը պարտավոր է վճարել.

1) համայնքապետարանի 900105201777 հաշվեհամարին՝ 59 310 (հիսունինը հազար երեք հարյուր տասը) դրամ՝ ավտոտնակի գինը.

2) համայնքապետարանի 900105201363 հաշվեհամարին՝ 299 270 (երկու հարյուր իննսունինը հազար երկու հարյուր յոթանասուն) դրամ՝ հողամասի գինը.

3) համայնքապետարանի 900105201652 հաշվեհամարին՝ 65 000 (վաթսունհինգ հազար) դրամ՝ համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքի օտարման փաստաթղթերի կազմման համար ծառայության վճար, 5 000 (հինգ հազար) դրամ՝ հասցեի տրամադրման ծառայության վճար:

5. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Արայիկ Մնացականյանի կողմից:

6. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից 60-օրյա ժամկետում որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպում չկատարելու դեպքում որոշումը կհամարվի ուժը կորցրած:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արայիկ Մնացականյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Վ. ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2021թ. դեկտեմբերի 14

ք. Աբովյան